# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

**ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար «ՀՀ ՇՄ-ԳՀԾՁԲ-26/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով «Կայքէջի արդիականացման ծառայությունների ձեռքբերման» գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի կասեցման**

**18.05.2026 թվական** **ք. Գյումրի**

Մասնակցում էին՝

Հայտը բացողներ՝

Աստղիկ Ալեքսանյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ մասնագետ,

Անահիտ Հարությունյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի ավագ մասնագետ

Հայտը գնահատողներ՝

Զարիկ Մուրադյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ /հանձնաժողովի նախագահ/

Գրիգոր Գրիգորյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ /խմբի անդամ/,

Շիրակ Երանոսյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության ավագ մասնագետ /խմբի անդամ/:

Քարտուղար՝ Արմեն Համբարձումյան

Հանձնաժողովը լսեց օրակարգի հետևյալ հարցերը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(զեկուցող՝ Գ. Գրիգորյան)

1. Գնանշման հարցման գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին,
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի մասին:
3. Տվյալներ բացված հայտերում պահանջվող /պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին :

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
(զեկուցող՝ Գ. Գրիգորյան)

| | |
|---|---|
| **Հայտ ներկայացրած մասնակիցներ** | **4 /չորս/** |
| | Վահե Կարապետյան Ա/Ձ |
| | «ՌՍՍ ԱՌՄ» ՍՊԸ |
| | «Բիոնկոդ» ՍՊԸ |
| | «ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ |

Ընդունել ի գիտություն, որ
Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները.

մասին
2. Մասնակցի գնային առաջարկները հետևյալն են

| **Չափաբաժնի համար** | **Ներկայացված հայտեր** | **Գնային առաջարկ** | | |
|---|---|---|---|---|
| | | **Արժեք** | **ԱԱՀ** | **Գին** |
| 1 | Վահե Կարապետյան Ա/Ձ | 550000 | 0 | 550000 |
| 2 | «ՌՍՍ ԱՌՄ» ՍՊԸ | 688 000 | 20 % | 825 600 |
| 3 | «Բիոնկոդ» ՍՊԸ | 875000 | 0 | 875000 |
| 4 | «ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ | 10,000,000 | 20 % | 12,000,000 |

(զեկուցող՝ Գ. Գրիգորյան)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2017թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, մասնակցի ներկայացրած գնային առաջարկը:
Ընդունել ի գիտություն.

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Տվյալներ բացված հայտերում պահանջվող /պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին :

| N | Կազմակերպություն | Գնահատում | Մեկնաբանություն |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Վահե Կարապետյան Ա/Ձ | **անբավարար** | **Համաձայն հրավերի** 2.4 կետի «Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝<br>1) մասնագիտական փորձառություն,<br>Մասնակցին ներկայացվող՝<br><br>1) <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝<br>ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի վեբ կայքերի սպասարկման ծառայությունների մատուցման առնվազն մեկ պայմանագիր, որի շրջանակում մատուցված ծառայության ծավալը (հանրագրումարի ծավալը) գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն հայտով նախատեսված առաջարկած գնի 50 տոկոսից:<br>բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:<br>Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.<br>2) աշխատանքային ռեսուրսներ՝<br>որակավորումը հավաստող փաստաթղթեր /դիպլոմ և այլն/,<br>3) բոլոր փաստաթղթերը ներկայացնել հայերեն լեզվով:<br>Առաջարկում ենք հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով պահանջվող, սակայն չներկայացված փաստաթղթերը, հակառակ դեպքում Ձեր հայտը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | կմերժվի: |
| 2 | «ՌՍՍ ԱՌՄ» ՍՊԸ | անբավարար | Համաձայն հրավերի 2.4 կետի «Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող՝<br>1) մասնագիտական փորձառություն,<br>Մասնակցին ներկայացվող՝<br><br>1) <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝<br>ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող հինգ տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի վեբ կայքերի սպասարկման ծառայությունների մատուցման առնվազն մեկ պայմանագիր, որի շրջանակում մատուցված ծառայության ծավալը (հանրագրումարի ծավալը) գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն հայտով նախատեսված առաջարկած գնի 50 տոկոսից:<br><br>բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:<br>Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները.<br>2) աշխատանքային ռեսուրսներ՝<br>որակավորումը հավաստող փաստաթղթեր /դիպլոմ և այլն/,<br>3) բոլոր փաստաթղթերը ներկայացնել հայերեն լեզվով:<br>«Դիմում –հայտարարության» մեջ նշված «Իրական շահառուների վերաբերյալ» հղումը վերանայել և ներկայացնել ճշտված |

| | | | |
|---|---|---|---|
| | | | տարբերակը:<br>Առաջարկում ենք հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջը՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իրավերով պահանջվող, սակայն չներկայացված փաստաթղթերը: |
| 3 | «Բիոնկոդ» ՍՊԸ | անբավարար | Առաջարկում ենք անգլերեն լեզվով ներկայացված փաստաթղթերը ներկայացնել նաև հայերեն լեզվով: |
| 4 | «ՀԵԼԻՔՍ ԿՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ | անբավարար | Առաջարկում ենք անգլերեն լեզվով ներկայացված փաստաթղթերը ներկայացնել նաև հայերեն լեզվով: |

(զեկուցող՝ Գ. Գրիգորյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի պահանջը՝ մեկ աշխատանքային օրով կասեցվում է նիստը մասնակցի հայտում արձանագրված իրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունները վերացնելու համար:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Խմբի անդամ՝ Աստղիկ Ալեքսանյան

Անահիտ Հարությունյան

Զարիկ Մուրադյան

Գրիգոր Գրիգորյան

Շիրակ Երանոսյան

Համակարգող քարտուղար՝ Արմեն Համբարձումյան